



08.02.2014

<<Էրեբունի>> պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող Միքայել Բադալյանը 2014թ. հունվարի 31-ից փետրվարի 7-ը ՀՀ մշակույթի նախարարության <<Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն>> ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Ա. Փիլիպոսյանի և <<Մեծամոր>> պատմահնագիտական արգելոց-թանգարանի վարիչ Ա. Ջաքյանի հետ հյուրընկալվել է Կարշավայի համալսարանի Հնագիտության ինստիտուտում և Լեհաստանի Միջերկրածովյան հնագիտության կենտրոնում:

Գիտաճանաչողական այցի շրջանակում կազմակերպված կոնֆերանսում Մ. Բադալյանը հանդես է եկել <<Ռուրարտական պատկերագրության մեջ դրվագված առյուծի և ցուլի որսի տեսարանների շուրջ>> թեմատիկ զեկույցով, որը մասնագիտական շրջանակում ընդունվել է մեծ հետաքրքրությամբ:

Այցի շրջանակում տեղի են ունեցել այցելություններ Լեհաստանում գործող հնագիտական և ազգագրական ուղղվածության մասնագիտացված կառույցներ՝ թանգարաններ ու հուշարձանային վայրեր, ինչպես նաև տեղի են ունեցել օգտակար հանդիպումներ ժառանգության կառավարման բնագավառում ներգրավված տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ: